

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ՌՅԿԸ-Թ


ՀԱՏԱՐ

ՀԷ

1919

ՅՈՒՆԻՍ

ԹԻՒ 6



ԶՈՒԳՈՒԹԻՒՆ Է ՄԱՅՐ ԲԱՐԵԱՅ

126

ՔԱՂՅՐԱԽՕՍԻԿ եղիշէի ազգարար ձայնն է, որ տաան եւ չորս դարերու ամբարտակէն մեզի կը հասնի հեշտալուրի՝ Նոյն նախատակութիւնն նախատակեցաւ եւ այսօր աշխարհս Հայոց եւ արեան ծովէն անցաւ՝ սրբագործելով հայրենիքի վերածնունդեան ու ազատութեան գործը։ Այս մեծ գործը հաստատուն հիմերու վրայ դնելու համար, հարկաւոր է ամենքից առաջ՝ սէր եւ միութիւն, թէ վարիչներու եւ թէ գործիչներու կողմէն։ Առանց սիրոյ եւ միութեան ոչ մի արծառի յիշատակաց գործ կատարուած չէ ոչ ոքէ։ Ասոր համար մեզի հանդիմանութեան մեր ազատութեան արշալոյսին յիշեցնել եղիշէի խօսքը, մինչ ինքն դառնութեամբ սրտի կը գրէր, որբալով անզուգուծեան արեւտալի հետեւանքներն։

Արդարեւ ամենքն համագումար հն թէ Մէլն է ստեղծական աղբիւր ամենայն գործոց, իսկ միութիւնն կը կազմէ գործնական ոյժն եւ զօրութիւնն՝ ցանկացած յաջողութիւնն ձեռք բերելու, հասնելու նպատակին,

երջանկութեան բարիքը վայելելու համար։ **Զուգութիւն է մայր բարեաց։** Իսկ ի հակառակէն ի՞նչ տխուր եւ դատապարտելի բան, ուր կ'իշխէ հեռը, նախանձն, անձնական կիրք ու ատելութիւն, անդ կը յորդին ամօժալի ցուցադրութիւնք, ապիկարութիւն, թշուառութիւն, յետին կործանումն։ **Անզուգութիւն ծնող չարեաց։**

Այնցելոյն ցաւոտ յիշատակներն նորոգութեան ամեն հայ ազնիւ սրտերու մէջ, երբ հազիւ թէ դաշնակիցներու փառաւոր յաղթութիւններէն վերջ, մեր վտանգուած յոյսերն սկսել էին արծարծուիլ վերստին, եւ հայրենի երկնքի ծայրէն ազատութեան մխլեթարիչ հաճանքներն փայլելիլ, յանկարծ հին ուրուականն անմիաբանութեան, ներքին երկպառակութեան ատելի մուսլ ըստուերն, սկսաւ բարձրանալ հայկական հորիզոնի վրայ։ Լրագրութեան էջերուն մէջ սկսան տխուր պատկերներ երեւալ, գոզցես հաւաստելու հայերուս վերագրուած անմիաբանութեան պարսաւն։ Պահ մը վիւա

տուեթիւն եւ լքումն եկաւ թէ ի գրւոր ուրեմն անմահ չ. Ալիշանն հայրենասիրաբար հերքել էր այդ գաղափարն իւր գրուածեամբն. «Եղծ կարծեաց անմիաբանութեան Հայոց».

— Մինչ այս ցաւոտ վարանումի մէջ էր Հայ Հասարակութիւնն, երկիւղ կրելով Հայկական հարցին աւարելու թեմէն, անձնական կրից եւ կարծեաց անհաշտ ալեկոծութեան մէջ, որ փոխանակ ողջամիտ դիմագրութեան մը, հարցը աւելի լաւ լուսաւորելու եւ ամրապնդելու միաձայլ խորհրդով, ընդհակառակն իւրաքանչիւր կուսակցութիւն կը ձգտէր ինքն կորզել առաջնութիւնն, ինքն միայն հանդիսանալ հայրենիքի եւ ազգի ազատարարն. իւրաքանչիւրն իւր ծրագրի մէջ եւ անով՝ միտքը դրած էր կանգնել վերջին յաղթանակին: Ահա թէ յորով էր ընտրեալներու եւ ուժեղներու տկարութիւնն, բաժան բաժան կամ ան միաբան գործելուն մէջ: Ոչ միայն ազգայնոց՝ այլ աւելի շուտ, տիրող տարածայնութիւններն եւ գրգիռներն, իրենց վատ ազդեցութիւնն ունեցան չորս մեծ Պետութեանց վարիչներու վրայ, որոնք թէ եւ գիտակից հայ ցեղի անվիճելի իրաւանցը, ունենալու իւր ներկայացուցիչն Համաժողովին մէջ, միշտ բացասական ձեռքով յետ մղեցին իրաւունքի եւ Արդարութեան շեմէն: Եւ այդ եւս շնորհիւ մեր ջարդարար արթուն եւ ռիւսերիմ թշնամիներուն, որոնք ինչ գոյներով արդեօք նկարագրած են Հայկական Պատուիրակութեան շուրջը տեղի ունեցած յուզումնայից պայքարներն:

Մինչ այսպէս, ասացինք, հայրենիքի նորածնունդ հորիզոնի վրայ մտայլ ստուեր մը կը ծաւալէին անմիաբանութեան հետեւանքները, յանկարծ սպառնացող ամբերու միջէն լուսոյ եւ յուսոյ հառազայն մը Պարիսէն Աւետաբեր կը հասնէր թէ վերջապէս Հայկական Պատուիրակութեան միութիւնն կազմուեր է. ազգիս երկու մեծ հատուածներն համերաշխ գործելու միաբաններ են: Զեռք ձեռքի տուած նոյն մտածութեամբ, նոյն ուղղութեամբ պիտ'աշխատին հասնելու մէկ նպատակի մը, որ է ամբողջ ազգի բաղձանքը եւ նպատակը. ունենալու մի,

անկախ եւ ազատ Հայաստան, իւր քաղաքական, աշխարհագրական եւ բնական սահմաններու մէջ:

Այս կատարուած գեղեցիկ գործը, մեծ յաղթութեան մը կը հաւասարի արտաքին թշնամիներու դէմ. իսկ ներքին յարկութիւնն աւելի դժուարին լինելով, վստահ որոյ համայն հայրութեան համար աւելի թանկագին եւ բեղմնաւոր հետեւանքներով ի: Ասով փարատեցաւ այն սխալ կարծիքն թէ Հայերն անընդունակ են իրենք զիրենք կառավարելու: Այդ յուսով ու վստահութեամբ կրնանք ասել թէ ի վիճակի են մեր ներկայ ուժերն, ինքնավար հայրենիքի դէկն ձեռք առնելու առանց իսկ միմեծ Պետութեան ազատամիտ հովանաւորութեան, եթէ պէտք չունենայինք սնոր առ հարկի ժամանակուսորայէս երկրի անպատրաստ քաղաքական եւ տնտեսական պահանջներուն պատճառով, շնորհիւ նպակին ապիկար եւ անընդունակ թուրք տիրապետողներուն:

Ուստի եւ «Բազմալիւլա»-ն կը փութայ յատնելու իւր մեծագոյն ուրախութիւնն Հայկական Նորակազմ Պաշտօնական մարմնոյն, որ իւր մէջ կը միացնէ Հեղինակութիւնն եւ դիւանագիտութիւնն յանձն բազմափորձ վստմ. Նուպար իշխանին, եւ անպարտելի կորովն եւ կենսունակութիւնն ի դէմս Արարատեան Հանրապետութեան: Ուր միացած են իմաստութիւնն եւ զօրութիւնն, խորհելն եւ գործելն մէկ կամքի մէջ, իւր ոչ թէ միայն հայրութեան այլ եւ դաշնակից ազգերու համար նշանակալից է եւ բրաւական մեր հայրենիքի սպագան հաստատուն եւ անձեռնմխելի իմիւռնքներու վրայ դրուելուն:

Այսուհետեւ ոչ եթէ անջատ կուսակցութիւններն են որ պիտի գործեն. ինչ ձեռի եւ գոյնի ալ նոքա պատկանին, այլ մի միայն Հայ ազգութիւնն, ոչ թէ անջատ մտքեր են որ ղեկավար պիտի լինին մեր վերածննդը հայրենեաց, այլ միահամուռ Հայ ազգի կամքն: Երբ միանգամ այդ գաղափարով ճուղեցաւ Պարիսու Ազգային պատուիրակութիւնն, այլեւս փորձաքաղն արդէն դրուած է. պէտք է այսուհետեւ

հուսատարմութեամբ փութալ պահել միշտ սիրոյ եւ միաբանութեանը զօդը. *Զուգու թիւն է մայր բարեաց:*

Կրօնականը ուրեմն այն արեան հեղեղներն որոնք լուսցին զՀայաստան թուրքական պրօթականներէն, այն պատուական արիւնն մեր նստատակ եղբարց եւ քերց, որոնք դիւցազնօրէն ծափեցին վերականգնելու կործանած հայրենիքն, պէտք է աւելանայ բոլորքս՝ սուրբ հուրն հայրենեաց անշնչ պահել. նա է մեր վերածնութեան ազդակն, նա պիտի լինի նաեւ պահպանողն: Հսկական Պատուիրակութեան միութիւնն գաւազակն է մեր ապագայ երջանկութեան. *Կեցո՛ղ*՝ Անկախ Ազատն Հայաստան: Ահա բոլոր ազգի ցանկութիւնն, բոլոր սրտերու ուխտն: Թող ամենքի սեպուհ պարտքն լինի համերաշխաբար խմբուիլ այդ Նոր Պաշտօնական մարմնի՝ շուրջն, աջակից լինել խորհրդով, խօսքով եւ գործով. զօրավիգն լինել, երբ հարկն ստիպէ, մեր սրբազան իրաւունքներ բռնաբարողներու դէմ:

Հսկական Նոր պաշտօնական մարմինն է մեր գրաւականը, մեր իրաւունքների մարմնացումն, մեր բոլոր վստահութիւնն եւ հաւատքն:

Մեր սիրելի հայրենեաց ազատութիւնն, անկախութիւնն եւ անվտար պահպանութիւնն այս առաջին քայլն կախուած է:

Մերիկներով բաժանուած Հայ եղբայրներ ձեռն ի ձեռն խառնելով բարձրացնենք Սիւրոյ, միութեան եւ համերաշխութեան սրբազան դրօշն, անոր վրայ է նկարուած կարմրանիշ Հայաստանի ազատագրութիւն: Հ. Ալիշան մարգարէաշունչ հոգւով 1867 կը

տեսնար ԱՅՍ ՕՐԸ եւ կը գրէր իւր յետագայ ոսկեղինիկ տողերն.

Սիրտ ի սիրտ, ձեռն ի ձեռն՝ եղբարք, պնդեցցին, Առ մի նպատակ լեալ ուշ ի կուրծ.

Երթունք հրաշունչք համախոհ միտքս ծընցին, Մի բաբախին ի լանջս հանուրց.

Բացցուք հանցուք ի շիրմաց ու արձանաց Զժառանգութիւնս հարց անմահ պարծանաց.

Յուցանել ազանց զնախնիս անուանիս, Յուցանել նախնեաց որդիս արժանիս.

Օ՛ն եւ օ՛ն եղբարք եռանդուն Կառուցուք մեզ սիրտ հայկազուն:

Զայն տուք ելք հայրենասէրք ի հանդէս: —

Ահա մանկունքս Հայոց մեծաց.

Նոր Հայաստան մեզ յարիցէ լուսատես

Մերկնեալ ըզքօղ նախատանաց.

Գուն գործեսցուք մահուադի ի բռն.

Ո՛հ Հայաստան, մի՛ գանխուլ կաս լըռն.

Արացուք ե քեզ յազինս անուն պերճ,

Մինչեւ մեզ կենաց հասեալ իցէ վերջ.

Օ՛ն եւ օ՛ն եղբարք եռանդուն

Կեցցէ՛ յաւետ ազգ հայկազուն:

Այս է ընդհանուր ռախտն եւ խանդաւառութիւնն, շատ կը յուսանք մեր պատկառելի եւ սիրելի Գործիչներէն. Ազգին բաղդը, Հայաստանի դատը՝ իրենց յանձնուած է: Մեր եւ ապագայ դարերու երախտագիտութիւնը իրենց պայծառ անուններն եւ իմաստափայլ գործերն՝ Մասիսու պրոփիլերայ սրտին վրայ պիտի դրօշմէ:

Ո՛հ, այն ժամանակ Նահապետի Ուխտն ալ կատարուած է:

Հայոց Հաւատք, Հայոց Տուն, Կացցեն ազատ հաստատուն:

ԽՄԻ. ԲԱՄ.